ՀՈԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ՝
հայ «զարմացած» դիվանագիտությանը

«Ես չգիտեմ՝ արդյոք ո՞ր արժեհամակարգի շնորհիվ Եւրախորհուրդը պետք է պաշտպանի այն թեզը, որ ժողովրդավարության հաստատումը կախված է տարածքից, տարածքի մեծությունից կամ դրա հետ կապված հարցերից», -«Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում զարմանում է Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ պատվիրակության անդամ Արմեն Ռուստամյանը՝ մեկնաբանելով Ադրբեջանի վերաբերյալ ԵԽԽՎ-ի բանաձեւում տեղ գտած մի շարք դրույթներ: Փաստաթղթում, մասնավորապես, նշված է, որ «Ադրբեջանում ժողովրդավարության կայուն զարգացումը ծայրահեղ դժվար կլինի, քանի դեռ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնված չէ»: Բանաձեւը հղում է անում նաեւ այս տարվա մարտի 14-ին «Ադրբեջանի գրավյալ տարածքներում իրավիճակի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած մեկ այլ բանաձեւի վրա: Հիշեցնենք, որ Հայաստանում բավական մեծ աղմուկ հանած այդ փաստաթղթում վերահաստատվել էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ հայկական կողմին պահանջ էր ներկայացվել՝ զինված ուժերն անհապաղ դուրս բերել «գրավյալ» տարածքներից: Մտահոգություն էր հայտնվել նաեւ, որ զինված հակամարտությունը Ղարաբաղում եւ շրջակա տարածքներում շարունակում է վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: ԵԽԽՎ վերոհիշյալ բանաձեւում տեղ գտած այս, մեղմ ասած, ոչ հայանպաստ ձեւակերպումները փոխելու նպատակով՝ հայկական պատվիրակությունը մի քանի, այսպես ասենք՝ հակաառաջարկ է ներկայացրել, Ռուստամյանի խոսքերով՝ «հավասարակշռությունն առնվազն պահպանելու նպատակով»: Այդ առաջարկները, սակայն, մերժվել են: Նշելով, որ «այս երկուսը, իհարկե, շատ վտանգավոր հետեւանքներ կարող են ունենալ», Ռուստամյանը, միաժամանակ, համոզմունք է հայտնել, որ «ուղղակի ազդեցություն Մինսկի խմբի գործունեության վրա սա չի կարող ունենալ»:

Եւ այսպես, ի՞նչ կարելի է ասել ակնհայտ հակահայկական բնույթ ունեցող միջազգային հերթական ատյանի կողմից ընդունված այս նոր բանաձեւի առնչությամբ: Նախ՝ պետք է փաստենք մի շատ պրոզայիկ իրողություն. դրանով պաշտոնական Բաքուն, ի տարբերություն «զարմացած» Երեւանի, արձանագրեց ԼՂ հարցի կարգավորման «ճակատում» ունեցած իր հերթական դիվանագիտական հաղթանակը: Ի շարունակություն այս պնդման, պետք է ցավով նշենք նաեւ, որ Հայաստանն էլ, բնականաբար, հերթական դիվանագիտական պարտությունը շալակեց: Միանգամայն համաձայնելով Ռուստամյանի այն կարծիքին, որ դա, «իհարկե, շատ վտանգավոր հետեւանքներ կարող է ունենալ մեզ համար», այնուամենայնիվ, հարկ կհամարեի հեռակա կարգով պրն Ռուստամյանին (ու, առհասարակ՝ հայ դիվանագիտությանը) մի քանի լրացուցիչ հարց եւս ուղղել: Հարգարժան պրն Ռուստամյան, Ձեզ չի՞ թվում արդյոք, որ վերջին շրջանում միջազգային զանազան ատյաններում Բաքվի տարած հաղթանակներն ու Երեւանի կրած պարտություններն արդեն «բարի ավանդույթի» են վերածվում: Արդյո՞ք, ըստ Ձեզ, ԵԽԽՎ-ի եւ ՄԱԿ-ի «անարդար» բանաձեւերի ի հայտ գալու մեջ մեղավոր են միայն «ադրբեջանական ստահոդ քարոզչությունը» եւ «ՄԱԿ-ի ԳԱ-ի կանոնակարգում տեղ գտած առանձին թերությունները», եւ մի՞թե այդ ամենի մեջ դուք, այսինքն՝ հայկական դիվանագիտությունը, այնուամենայնիվ, չունի մեղքի իր սեփական բաժինը: Վերջապես, եթե ՄԱԿ-ի ԳԱ-ի կանոնակարգը սողանցքներ է թողնում անարդար որոշումների համար, կամ գործի են գցվում քարոզչական՝ թեկուզ ոչ այնքան պարկեշտ միջոցները, ինչո՞ւ հայկական կողմը եւս, այդ ամենը հրաշալի հասկանալով, հենց ինքը չի փորձում այդ նույն սողանցքների ու գործիքների կիրառմամբ, «ի փառս հայրենյաց», գոնե մեկ հաղթանակ էլ իր օգտին գրանցել:

Ինչպես տեսնում ենք, ինչուները շատ են: Գրեթե վստահ եմ, սակայն, որ դրանք պատասխանների չեն արժանանալու, որովհետեւ այդպիսիք, գոնե այս պահին, հայ-



կական կողմը չունի: Այդուհանդերձ, վատ չէր լինի, որ աշխատանքից ու հատկապես՝ ԵԽԽՎ-ում Հայաստանի վերաբերյալ ընդունվելիք բանաձեւը մեղմացնելուն ուղղված եռանդուն ջանքերի գործադրումից հետո հայ պատվիրակներն իրենց հանգստի ժամին երբեմն էլ վերը բերված հարցերի վրա մի քիչ մտմտային: Եթե դա նրանց համար օգտակար չլինի, ապա վստահ եմ՝ նաեւ չի վնասի:

Արամ ՎԻՐԱԲՅԱՆ